ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1951 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1951 թ. հունվարի 8–9-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի և Լուսավորության Մինիստրության միացյալ գիտական սեսիան՝ նվիրված Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատություններին և սովետական դպրոցում լեզուների դասավանդման հարցերին։

Սեսիային մասնակցում էին ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների և միջնակարգ դպրոցների հայոց լեզվի և գրականության դասատուներ, մեթոդիստներ, լեզվաբաններ և գիտության այլ բնագավառի աշխատողներ։

Ներածական խոսքով սեսիան բացեց Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Ներսիսյանը։ Նշելով ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունների խոշոր նշանակությունը լեզվաբանության բնագավառում, ընկ. Ներսիսյանը կանգ առավ գիտական ֆրոնտի աշխատողների և հատկապես լեզվագետների, միջնակարգ դպրոցների լեզվի ու գրականության դասատուների առջև ծառացած խնդիրների վրա։ Ընկեր Ստալինի աշխատությունները մեզ հնարավորություն են տալիս վերակառուցել կարճ ժամանակամիջոցում ռեսպուբլիկայի լեզվաբանության բնագավառի աշխատանքները, վերացնել լեզուների դասավանդման թերությունները սովետական դպրոցում և այդ դասավանդումը դնել նոր բարձրության վրա։

Սեսիայի առաջին նիստում լսվեցին հետևյալ զեկուցումները.

1. Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունները և մեր խնդիրները։ Զեկուցող՝ Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ա. Ղափանցյան։ 2. Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունները որպես մեծագույն ավանդ մարքսիզմ-լենինիզմի գանձարանում։ Զեկուցող փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մ. Ի. Պետրոսյան։

Երկրորդ նիստում լսվեցին հետևյալ զեկուցումները.—1. Լեզուն իբրև հասարակական երևույթ և նրա սպեցիֆիկումը։ Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Գ. Գ. Սևակ։

2. Ի. Վ. Ստալինի ուսմունքը և գրականագիտության խնդիրները։ Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Է. Ս. Թոփչյան։ 3. Ի. Վ. Ստալինի ուսմունքը լեզվի և բարբառի մասին։ Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Ղ. Ղազարյան։

Երրորդ նիստում լսվեցին հետևյալ զեկուցումները.—1. Ի. Վ. Ստալինի ուսմունքը լեզվի քերականական կառուցվածքի մասին։ Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Վ. Գրիգորյան։ 2. Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում. Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ա. Աբրահամյան։

Սեսիայի չորրորդ նիստում լսվեցին հետևյալ զեկուցումները.—1. Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի հարցերը հայկական դպրոցում. Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Լ. Մելքումյան և 2. Օտար լեզուների դասավանդման հիմնական խնդիրները հայկական դպրոցում։ Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Ռ. Զահուկյան։

Զեկուցումների շուրջը ծավալվեց մտքերի աշխուժ փոխանակություն։

Սեսիայի աշխատանքներն ամփոփեց Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստր ընկ. Ս. Միքայելյանը։ Սեսիայի մասնակիցները մեծ ոգևորությամբ ողջույնի հեռագիր ուղարկեցին ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Լեզվի ինստիտուտը և Հայկական ՍՍՌ Լուսավորության Մինիստրության՝ Դպրոցների գիտա-հետազոտական ինստիտուտն առանձին բրոշյուրներով հրատարակեցին սեսիայում կարդացված զեկուցումներից մի քանիսը։

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ